ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ ֆինանսների նախարարության 2018 թվականի դեկտեմբեր ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2018 թվականի ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 53478.3 մլն դրամ՝ պլանավորված 52700.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 1.5 տոկոսով կամ 778.3 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 34.6 տոկոսով կամ 13732.3 մլն դրամով, որից 10062.3 մլն դրամ գումարը պայմանավորված է «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ի կողմից վճարված հարկային եկամուտների աճով:

Դեկտեմբեր ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 5468.8 մլն դրամ՝ պլանավորված 5400.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 1.3 տոկոսով կամ 68.8 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 8.7 տոկոսով կամ 435.4 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 100 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 9 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 42 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել են 137.5 մլն դրամ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ, այդ թվում՝ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության 33 ստուգում՝ 135.7 մլն դրամ գումարով:

«Հարկային համակարգի բարեփոխումների հայեցակարգի» շրջանակներում իրականացված հսկողական միջոցառումների արդյունքում արձանագրվել են ապօրինի ձեռնարկատիրական գործունեության իրականացման ու ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների թերհայտարարագրման 1-ական դեպքեր:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 100 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 78-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 10-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի և դրոշմավորման կանոնների պահպանման, 5-ը՝ ապրանքների շրջանառության և ծառայությունների մատուցման ծավալների, ինչպես նաև իրացման փաստացի գների չափագրման և 7 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել 3 վարչական գործ՝ 7.8 մլն դրամ գումարով, ավարտվել՝ 4 վարչական գործ, որով բավարարված գումարը կազմել է 4.3 մլն դրամ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 129 վարչական գործով սահմանվել է 1.7 մլն դրամ վարչական տուգանք:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 6658 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 5738:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 62 պայմանագրեր:

Հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում կատարվել է վերադարձ 12 վարձու աշխատողի՝ 1.5 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 63 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Ֆինանսների նախարարի հրամանով հաստատվել է «Անձնական հաշվի քարտերի ավտոմատացված վարման ծրագրի ներդրման մասին» հրամանը, փոփոխություններ կատարվել հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի անհատական կազմում, «Վարձու աշխատողի և պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի անհատական տվյալների» գրանցման հայտում և «Հարկային մարմնի կողմից հավաքագրվող հարկատեսակների և այլ պարտադիր վճարների հաշվետվությունների էլեկտրոնային ներկայացման համակարգի ներդրման» ժամանակացույցում:

Հաշվետու ամսում 3 աշխատակիցներ մասնակցել են Կովկասի ինստիտուտի նախաձեռնությամբ կազմակերպված «Ստվերային տնտեսություն» թեմայով սեմինար-քննարկումներին:

Դեկտեմբերի 25-ին 99 հարկ վճարողների շնորհվել է օրինապահ հարկ վճարողի կարգավիճակ և տրամադրվել հավաստագրեր: Օրինապահ հարկ վճարողների ընտրությունը կատարվել է համաձայն հաստատված չափանիշների՝ խոշոր, միջին և

փոքր հարկ վճարողների շրջանում ու նպատակ ունի հարկ վճարողների շրջանում ձևավորել և ամրապնդել հարկերի ինքնուրույն հաշվարկման և վճարման մշակույթը:

ՀՀ և ԱՀ հարկային մարմինների միջև համագործակցության ծրագրի շրջանակում հաշվետու ամսում ՀՀ և ԱՀ հարկային մարմինների միջև իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

Դեկտեմբեր ամսում հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով քննվել է մեկ դիմում-գանգատ, որի արդյունքում ֆինանսների նախարարին ներկայացվել է վերստուգում իրականացնելու վերաբերյալ առաջարկություն:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

2018 թվականի 4-րդ եռամսյակում հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կազմակերպվել են 864 տնտեսավարող սուբյեկտների ընդունելություն, որոնց արդյունքում պարզաբանվել են վերջիններիս հուզող հարցերը:

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

Դեկտեմբեր ամսում հարկային մարմնում կայացել է հարկային ծառայության «Գ» և «Դ» խմբերի թափուր պաշտոններ զբաղեցնելու համար կրկնակի փակ և բաց մրցույթներ և մրցույթների բանավոր փուլը (հարցազրույցը), որոնց արդյունքում հաղթող ճանաչված 2 մասնակիցներ նշանակվել են հարկային ծառայության պաշտոնների:

Հաշվետու ժամանակահատվածում հարկային մարմին է մուտքագրվել 195, ելքագրվել՝ 93 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրական դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 3 գրություն: